2/26.9/4717

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«30» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0066-21

Ձեռնարկողը՝ **«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ**
ք. Երևան, Բուզանդի 1/3

Գործունեությունը՝ ***«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0066-21

<<30>> 03 2021թ.

Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Արարատի մարզ, Մասիս քաղաք

Արարատի մարզի Մասիս համայնքի 3-րդ թաղամասի Հերացու փողոցի թիվ 21 հասցեում «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 3.383հա ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Մասիսի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Նկարագրական մաս.

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է հասարակական կառուցապատման գոտում, ամբողջովին կառուցապատված և կանաչապատված է:

ՀՀ ԲՆՕՐԴԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՈՒՄ
ՀՀ ԲՆՕՐԴԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ОБОРОНЫ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում և բնութագրվում է հարթ ռելիեֆով:

Տեղամասում ստորերկրյա ջրերը մակերևութային են և տեղակայված են 5-10մ խորության վրա:

Համաձայն նախագծային փաստաթղթերի քոլեջը բաղկացած է 3 հիմնական մասնաշեքերից և օժանդակ շինություններից՝ I-ին ուսումնական մասնաշենք (երկհարկանի, կից մարզադահլիճի մասաշենքով), II-րդ ուսումնական երկհարկանի մասնաշենք, ճաշարան (միահարկ), պահակատուն (միահարկ կառույց), ենթակայան (միահարկ), ավտոտնակ (միահարկ), ավտովարման հրապարակ:

Քոլեջ հաճախող աշակարտների փաստացի թիվը շուրջ 370 է: Վերակառուցվող ուսումնական քոլեջը նախատեսվել է մինչև 500 ուսանողի համար:

Նախագծով նախատեսվել է.

- ներքին ինժեներական ենթակառուցվածքների (սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման) համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում,
- հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, վերելակ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն,
- տարածքի բարեկարգում, լուսավորություն, արտաքին խաղահրապարակի կառուցում, ըստ անհրաժեշտության կառուցվել/վերակառուցվել են արտաքին հաղորդակցուղիները, նախատեսվել են ենթակայան, ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,
- համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսվել է այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն իրականացվել է հետևյալ կազմով.

- գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքերի վերակառուցման աշխատանքների նախագիծ, նախատեսելով սեյսմազինվածության բարձրացման միջոցառումներ,
- գոյություն ունեցող ճաշարանի վթարային մասնաշենքի քանդման և լաբորատոր
- մասնաշենքի կառուցման նախագիծ,
- գոյություն ունեցող մարզադահլիճի վթարային մասնաշենքի քանդման և նոր մարզադահլիճի, հանդերձարանի, սանհանգույցների և հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման նախագիծ (կից ուսումնական մասնաշենքին՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մարզադահլիճի մասնաշենքի փոքր չափսերը),
- կաթսայատան կառուցման նախագիծ,
- ենթակայանի նոր մասնաշենքի նախագիծ,
- ջերմոցային տնտեսության կառույցի նախագիծ (500 քմ մակերեսով՝ 2 հատ 250 քմ),
- ձկնաբուծության լճակ (2 հատ 100 քմ),
- ջրի ռեզերվուարներ (հրդեհաշիճման և պահուստային ջրամատակարարման)

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- գյուղտեխնիկայի պահպանման տարածք ծածկարանով (նախատեսված 4 տրակտորի համար),
- գյուղտեխնիկա վարելու համար նախատեսված հրապարակ,
- բաց մարզահրապարակ, պահակակետ, պարսպապատում:

Համաձայն հայտում ներկայացված տեխնիկատնտեսական ցուցանիշների՝ տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 33830 քմ, քանդվող շինությունները՝ 1280 քմ, վերակառուցվող շինությունները՝ 1970 քմ, կառուցվող շինությունները՝ 2760 քմ, կանաչ տարածքը՝ 18661 քմ, ճանապարհները՝ 8867 քմ, պարիսպը՝ 292 քմ:

Նախատեսվող աշխատանքների տևողությունը կկազմի 27 ամիս:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը նախատեսված է 90 մարդ, որից բանվորներ՝ 81 և ինժեներներ՝ 9 մարդ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ աշտարակային կռունք, ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարության ժամանակ շինանյութերից նախատեսված է օգտագործել բետոն, ամրան, այլումինե կոմպոզիտային նյութեր, ապակի, տրավերտինե երեսպատում, բարձրորակ ներկ: Բետոնի շաղախի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Քոլեջի ջրամատակարարումն ու ջրհեռացումն, էլեկտրամատակարարումն ու գազաֆիկացումը իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունների տեխնիկական պայմանների:

Նախատեսվող գործունեության համաձայն կենցաղային կոյուղու արտաքին ցանցը ինքնահոս է: Ջեռուցումը նախատեսված է տարածքում նախագծվող կաթսայատնից:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 150-200 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1200մ^3 շինարարական աղբը, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1747.64մ^3/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային հանույթը կազմելու է 10955մ^3, որից հետլիցքը՝ 6193մ^3: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Մասիս քաղաքի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջուրը կմատակարարվի տարածքում հատուկ գործող հորից: Ծառատեսակների համար նախատեսվել է անձրևային ոռոգման համակարգ: Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF RA MINISTRY OF NATURAL RESOURCES
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են՝ մթնոլորտային օդը, հողը և ջրային ռեսուրսները պահպանել աղտոտումից, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում,
- շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
- շինարարական տեխնիկայի լիցքավորումն ու յուղումը շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով հեղուկ նյութերի պահում՝ հատուկ տակդիրների վրա,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 700 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի շենքային պայմանների բարելավումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Արարատի մարզպետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ:

Հայտը լրամշակվել է նաև ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Օրենսդրությամբ սահմանված կարգով Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Հերացու փող. թիվ 21 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է.

- առաջնորդվել ՀՀ քաղաքաշինական նորմերով և պահանջներով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը, արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին,
- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի 3-րդ թաղամասի Հերացու փողոցի թիվ 21 հասցեում «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան